ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 60/2

16 հունիսի 2022 թվականի

«Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգը» հաստատելու և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2018 թ. Մայիսի 26-ի որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգը» ՝ համաձայն հավելվածի։
2 Ուժը կորցրած ճանաչել 2018 թ. մայիսի 26-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»:
3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2022թ. հունիսի 16-ի նիստի թիվ 60/2 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա. Հ. Մակարյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ուսանողների պրակտիկայի կազմակերպման կարգն ու պայմանները:

2. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

II. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Պրակտիկան ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մասն է, որը հնարավորություն է տալիս ստացած տեսական գիտելիքները կիրառելու գործնականում, ինչպես նաև ձեռք բերելու մասնագիտական հմտություններ, կարողություններ ու փորձառություն:

4. ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկայի տեսակներն են՝ ուսումնական, մասնագիտական, մանկավարժական:

5. Ուսումնական պրակտիկայի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական գիտելիքները՝ նպաստելով մասնա-

գիտական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: Ուսումնական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերում:

6. Մասնագիտական պրակտիկայի նպատակն է գործնական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները, փորձառությունը և մասնագիտական բնագավառում ինքնուրույն աշխատելու կարողությունները: Մասնագիտական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում:

7. Մանկավարժական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողի՝ որպես ապագա մանկավարժի մասնագիտական կարողությունները և նպաստել մանկավարժական փորձառության ձեռքբերմանը: Մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է «ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգ»-ով սահմանված կարգով ու ժամկետներում:

8. Պրակտիկայի տեսակը, տևողությունը և անցկացման ժամկետները սահմանվում են տվյալ մասնագիտության կրթական ծրագրով:

9. Պրակտիկայի ծրագիրը ներկայացվում է տվյալ կրթական ծրագրի մասնագրի համապատասխան նկարագրիչում, որում նշվում են պրակտիկայի նպատակը, նախատեսվող աշխատանքները, տեսակը, ձևը, կրթական վերջնարդյունքները, գնահատման մեթոդները, չափանիշները և այլն:

10. Պրակտիկայի ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակացույցը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենը:

11. Ուսանողների պրակտիկան կազմակերպվում է ուսումնական և գիտական հաստատություններում, ԵՊՀ ուսումնաարտադրական բազաներում, պետական մարմիններում, համայնքային կազմակերպություններում, մասնավոր ընկերություններում, արտադրական ձեռնարկություններում, ինչպես նաև տվյալ մասնագիտության ոլորտային այլ կազմակերպություններում, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա և մասնագետներ:

III. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Ուսանողների պրակտիկան կազմակերպում է ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչությունը՝ կրթական ծրագիրն իրականացնող ստորաբաժանման հետ համատեղ:

13. Պրակտիկայի պատշաճ կազմակերպման պատասխանատվությունը կրում են ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի ղեկավարն ու ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն:

14. ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի ղեկավարը.

1) պրակտիկայի կազմակերպման նպատակով ԵՊՀ ԻՄ-ի անունից բանակցում է կազմակերպությունների հետ,

2) ըստ ժամանակացույցի՝ համակարգում է պրակտիկայի ծրագրերի կազմման աշխատանքները և հետևում դրանց անցկացման ժամկետների պահպանմանը,

3) ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հաստատմանն է ներկայացնում պրակտիկայի անցկացման հրամանների նախագծերը, պրակտիկայի ժամանակացույցը և երթուղիները,

4) ստորաբաժանումների պրակտիկայի պատասխանատուներից ստացված հաշվետվությունների հիման վրա կատարում է պրակտիկայի ամփոփում,

5) իրականացնում է պրակտիկայի կազմակերպման հետ կապված այլ գործառույթներ:

15. Ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն նշանակվում է տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից:

16. Ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն պարտավոր է կազմել և ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի ղեկավարին ներկայացնել.

1) առաջարկություն տվյալ ուսումնական տարում նախատեսվող պրակտիկայի անցկացման վայրերի վերաբերյալ,

2) պրակտիկային ուսանողների մասնակցության վերաբերյալ հրամանների նախագծերը՝ ուսանողներին տեղաբաշխելով ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի,

3) անցկացված պրակտիկայի վերաբերյալ հաշվետվությունները,

4) պրակտիկա չանցած և ստուգարքը չհանձնած ուսանողների անվանացանկը:

17. Պրակտիկայի անմիջական ղեկավարը, տվյալ ուսումնական տարվա համար հաստատված ուսումնական բեռնվածության համաձայն, պրակտիկան վարող անձն է:

18. Պրակտիկայի անմիջական ղեկավարը.

1) ապահովում է սույն կարգի 9-րդ կետի համաձայն հաստատված պրակտիկայի ծրագրից բխող միջոցառումների պատշաճ կատարումը,

2) սահմանված կարգով և պրակտիկայի ծրագրին համապատասխան՝ վարում է ուսանողների պրակտիկան ու գնահատում այն,

3) իրականացնում է պրակտիկային առնչվող այլ գործառույթներ:

IV. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

19. Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձևով: Ստուգված նշանակվում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային, կատարել է ծրագրով նախատեսված առաջադրանքները, սահմանված ժամկետում ներկայացրել է պրակտիկայի վերաբերյալ ավարտուն հաշվետվություն և/կամ պրակտիկայի օրագիրը (կարծիք-բնութագիրը):

20. Իր մասնագիտությամբ աշխատող ուսանողը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել աշխատավայրում՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

21. Ուսումնական պրակտիկան չանցած ուսանողը կարող է վճարովի հիմունքներով անցնել տվյալ կրթական ծրագրով նախատեսված ուսումնական պրակտիկաներից միայն մեկը և հանձնել ստուգարքը մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ ակադեմիական պարտքերի մարման կարգին համապատասխան:

Արգելվում է նույն ուսումնական տարում ընթացիկ ու վերահանձնվող ուսումնական պրակտիկաների միաժամանակյա անցկացումը: Պրակտիկայի վերահանձնումը կազմակերպվում է այն ուսումնական տարում, որում կրթական ծրագրով տվյալ ուսանողի համար այլ ուսումնական պրակտիկա նախատեսված չէ՝ բացառությամբ բակալավրիատի 3-րդ կուրսում ուսանողական իրավունքները վերականգնող կամ ԵՊՀ ԻՄ-ի տեղափոխվող ուսանողների, որոնց դեպքում մեկից ավելի պրակտիկաների միաժամանակյա վերահանձնումը կատարվում է հաստատված անհատական ժամանակացույցին համապատասխան:

22. Սահմանված կարգով արտասահմանի ուսումնական կամ գիտական հաստատություն մեկնած ուսանողի մասնագիտական պրակտիկան հնարավորության դեպքում կազմակերպվում է արտերկրի տվյալ հաստատությունում կամ առցանց եղանակով:

23. Մասնագիտական պրակտիկան չանցած կամ պրակտիկային վճարովի հիմունքներով մասնակցած, սակայն ստուգարքը չհանձնած ուսանողը հեռացվում է ԵՊՀ ԻՄ-ից:

V. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ԱՌՑԱՆՑ ԵՂԱՆԱԿՈՎ

24. Որոշակի հանգամանքների (արտակարգ դրություն, ռազմական դրություն, համաճարակ և այլն) առկայության դեպքում ուսանողների պրակտիկան, ըստ անհրաժեշտության, տնօրենի հրամանով կարող է կազմակերպվել առցանց եղանակով:

25. Առցանց եղանակով պրակտիկան կազմակերպվում և գնահատվում է սույն կանոնակարգին համապատասխան:

26. Առցանց պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

27. Ուսումնական պրակտիկան առցանց կազմակերպվում է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների կողմից՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ՝ համակարգչային վիրտուալ լաբորատորիաներ, ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ և այլն:

28. Մասնագիտական պրակտիկան առցանց կազմակերպվում է սույն կանոնակարգի 11-րդ կետով նախատեսված վայրերում: Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ստորաբաժանման կողմից նշանակված անմիջական ղեկավարը և ընդունող կողմի մասնագետները: Պրակտիկան իրականացվում է ծրագրին համապատասխան:

29. Մանկավարժական պրակտիկան առցանց կազմակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում (որոշ դեպքերում՝ նաև տվյալ ֆակուլտետի 1-ին կուրսերում): Պրակտիկայի անցկացմանը մասնակցում են ԵՊՀ ԻՄ-ից՝ մասնագիտական առարկայի դասախոս-մեթոդիստը, մանկավարժը, հոգեբանը, իսկ դպրոցից՝ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը, դպրոցի տնօրենը կամ փոխտնօրենը: Մանկավարժական պրակտիկան առցանց անցկացվում է տվյալ պահին հանրակրթական ուսումնական հաստատության կողմից օգտագործվող հարթակի միջոցով:

30. Մասնագիտական և մանկավարժական առցանց պրակտիկաների ընթացքը գրանցվում է ուսանողի անհատական էլեկտրոնային օրագրում, որում ըստ ամսաթվերի ամփոփ ներկայացվում են կատարված աշխատանքները, նշվում են պրակտիկայի տևողությունը, վայրը, և կցվում է կարծիք-բնութագիրը: